ԴՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Հ. Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ.— ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԻՋՃՅՈՒՂԱՅԻՆ ԿԱՊԵՐԸ. ԵՐԵՎԱՆ, 1970, 286 է.

Սոցիալիստական ընդլայնված վերարտադրության օրինաչափությունների բացահայտումն ու ուսումնասիրությունը տնտեսագիտության կարևորագույն պրոբլեմներից է։ Ժողովրդական տնտեսության զարգացման տեմպերի ու համամասնությունների օպտիմալ պլանավորման պրոբլեմը, դիալեկտիկական առաջընթացի պահանջներին համապատասխան իր մեջ սինթեզում է կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման կարևոր հարցերը։ Դրա համար էլ ժողովրդական տնտեսության հիմնական ու ճյուղային համամասնությունների զարգացման օրինաչափությունների բացահայտումը և պլանավորման միջոցով դրանց կատարելագործումը տնտեսագիտության ամենաառաջնահերթ խնդիրներից է։

Հ. Մարգարյանի դրախոսվող աշխատությունը սվիրված է ժողովրդական տնտեսության զարգացման միջճյուղային կապերի ու համամասնությունների ուսումնասիրությանը՝ Հայկական ՍՍՀ 1963 թ. արդյունքի արտադրության և բաշխման փաստացի միջճյուղային բալանսի նյութերի հիման վրա։ Աշխատությունը տեսականորեն ընդհանրացնում է ՀՍՍՀ ամբողջական արդյունքի միջճյուղային բալանս կազմելու փորձը, որը ՍՍՀՄ կենտրոնական վիճակագրության կողմից երաշխավորվեց օգտագործել միութենական հանրապետություններում 1966 թ. համար միջճյուղային բալանս կազմելու ժամանակ, ինչպես նաև ցույց է տալիս հասարակական արտադրության պլանային կատարելագործման ուղիները և դրան հասնելու միջոցները։ Դրքում առանձնահատուկ տեղ է արված միութենական հանրապետության հասարակական ամբողջական արդյունքի միջճյուղային բալանսի էությանն ու մեթոդոլոգիայի հարցերին։ Ընդհանուր տեսական ու գործնական պրոբլեմներից բացի, ուսումնասիրության մեջ ցույց են տրվում տնտեսական շրջանի միջճյուղային բալանսի մշակման առանձնահատկությունները։ Միջճյուղային բալանսի միջոցով, առաջին անգամ ստացված փաստացի նյութերի հիման վրա, դրքում կատարված է հասարակական արտադրության զարգացման ընդհանուր տնտեսական և ճյուղային համամասնությունների խորը վերլուծություն։

Աշխատության առաջին՝ «Հասարակական արտադրության կազմակերպման պլանային կատարելագործումը բաժնում հեղինակը բազարատնտեսության մարքս-լենինյան տեսության հիման վրա հիմնավորելով արտադրության պլանային կատարելագործման անհրաժեշտությունը՝ ցույց է տալիս, որ այն ժողովրդական տնտեսության պլանային զարգացման գլխավոր բովանդակությունն է։ Նա նշում է, որ վերարտադրության ընթացքում ճյուղերի միջև կապերի ու համամասնությունների փոփոխությամբ չի սահմանափակվում հասարակական արտադրության կազմակերպման համամասնությունների պրոբլեմը։ Ժողովրդական տնտեսության ճյուղերի միջև տեխնոլոգիական համամասնությունների փոփոխությունը ոչ թե պայմանավորում են գլխավոր արտանական համամասնությունները, այլ այն դրանց հետևանքն է։ Դա նշանակում է, որ ընդհանուր տնտեսական համամասնությունների փոփոխությունը, յուրաքանչյուր դեպքում, նշելով երկրի ուսյ դրվող տնտեսական, սոցիալական ու քաղաքական կոնկրետ խնդիրներից, իրենով պայմանավորում է ժողովրդական տնտեսության ճյուղերի տեխնոլոգիական համամասնությունները։

Հեղինակը բարձրացնում է հասարակական ամբողջական արդյունքի միջճյուղային բալանսի դերը պլանավորման մեջ, որը հնարավորություն է տալիս մաթեմատիկական մեթոդների և էլեկտրոնային հաշվողական տեխնիկայի շնորհիվ ժողովրդական տնտեսության պլանավորման ժամանակ նյութական ընդունել հասարակության վերջնական արդյունքը։ Միաժամանակ իրավացիորեն նշվում է, որ այդ մեթոդը չի կարելի հակադրել պլանավորման տարածքային մեթոդին, որով ժողովրդական տնտեսության զարգացման պլանների մշակման ելակետ է ընդունվում հասարակության հանձնաժողովի արտադրանքը։ Դրախոսվող ուսումնասիրությամբ ցույց է տրվում, որ երկու դեպքում էլ հարցի էությունը հանգում է ազգային եկամտի կուտակման և սպառման ֆոնդերի օպտիմալ հարաբերակցության սահմանմանը։

Լուսաբանելով արտադրության և սպառման հարաբերակցության հարցը, ի հակադրություն ազդություն ունեցող կարծիքի, նշվում է, որ արտադրության ու բնակչության պահանջարկի ճիշտ հարաբերակցությունը՝ դրանց համապատասխանությունը, շաղկապված լինելն ու բալանսավորվածությունն է և ոչ թե արտադրության առաջնցիկ աճը պահանջարկից (էջ 65)։

Գրքի երկրորդ բաժինը նվիրված է հասարակական ամբողջական արդյունքի միջճյուղային բալանսի էության ու մեթոդոլոգիայի հարցերին։ Այստեղ հատուկ ուշադրության են արժանի հեղինակի բազմաթիվ առաջարկությունները միջճյուղային բալանսի հետագա կատարելագործման ուղղությամբ։

Հասարակական արդյունքի վերարտադրության ընթացքում ժողովրդական տնտեսության միջճյուղային արտադրական կապերը բացահայտվում են ուղղակի և լրիվ ծախսումների գործակիցների միջոցով։ Հանգամանորեն վերլուծելով ուղղակի և լրիվ ծախսումների գործակիցների էությունը, հեղինակը գալիս է այն ճիշտ հետևության, թե տնտեսական շրջանի լրիվ ծախսումների գործակիցները որոշակիորեն տարբերվում են երկրի մասշտաբով միևնույն ցուցանիշներից։

Աշխատության երրորդ բաժինը նվիրված է ՀՍՍՀ ժողովրդատնտեսական և ճյուղային համամասնությունների վերլուծությանը։ Հեղինակը հանրապետության առաջին միջճյուղային բալանսի փաստացի նյութերի հիման վրա քննում է ՀՍՍՀ ժողովրդական տնտեսության զարգացման գլխավոր համամասնությունները ճյուղային կտրվածքով։ Ցույց է տրվում հասարակական արդյունքի և ազգային եկամտի կառուցվածքի նշանակությունը ժողովրդական տնտեսության զարգացման մակարդակը և մասնագիտացման ուղղությունը որոշելիս։ Բացահայտելով տեխնիկական առաջադիմության հիման վրա արտադրության զարգացման և հասարակական արդյունքի ու ազգային եկամտի ճյուղային կառուցվածքի փոփոխությունների փոխադարձ պայմանավորվածությունը, հեղինակը նշում է, որ հասարակական արդյունքի և ազգային եկամտի ճյուղային կառուցվածքի վերլուծության ժամանակ նկատի պետք է ունենալ ոչ միայն այս կամ այն ճյուղի տեսակարար կշիռը, այլև ամբողջ արտադրության ճյուղային կառուցվածքը և յուրաքանչյուր ճյուղի տեսակարար կշռի փոփոխության պատճառը։

Միջճյուղային բալանսը հնարավորություն է տալիս մանրամասն տվյալներ ստանալ հասարակական ամբողջական արդյունքի արժեքային կազմի վերաբերյալ, դա էկոնոմիկայի վերլուծման ու պլանավորման անհրաժեշտ պայմանն է։ Հասարակական արդյունքի փոխհատուցման ֆոնդի և նոր ստեղծված արժեքի հարաբերակցության պրոբլեմի վերլուծությունը հասարակական արտադրության կարևորագույն համամասնություններից է։ Այն շոշափում է աշխատանքի արտադրողականության, տեխնիկական առաջադիմության, արտադրության նյութատարության, աշխատատարության ու մի շարք այլ պրոբլեմներ, որոնք հանգամանորեն քննարկվում են գրախոսվող աշխատության մեջ։

Գրքում վերլուծվում է հասարակական ամբողջական արդյունքի արժեքային կազմը, ինչպես նաև հավելյալ արդյունքի նորմաները։ Ցույց է տրվում շահույթի և շրջանառության հարկի մասնակցության չափը հավելյալ արդյունքի կազմավորման մեջ։ Ուսումնասիրելով ճյուղերի արտադրական կապերը, հեղինակը հանգում է պլանավորման համար մեծ նշանակություն ունեցող հետևյալ եզրակացության՝ արտադրության ճյուղերի մեծ մասում նյութական արտադրական ծախսումների մեջ ամենաբարձր տեսակարար կշիռ ունեն տվյալ ճյուղի աշխատանքի առարկաների ծախսումները։ Այդ նույն հետևությանն է հանգում հեղինակը նաև հաջորդ գլխում, որտեղ քննարկում է հասարակական ամբողջական արդյունքի բաշխման հարցերը։ Հետևաբար, արտադրության ճյուղերի միջև գոյություն ունի արտադրական կապակցությունների որոշակի ուղղություն։ Դրանք կենտրոնացած են արտադրության քիչ թվով ճյուղերում։

Միջճյուղային բալանսի տվյալների հիման վրա ուսումնասիրողը քննում է անձնական ու հասարակական սպառման ճյուղային կառուցվածքը և տալիս է սպառման ֆոնդի կառուցվածքի կատարելագործման ուղիները։

Միջճյուղային բալանսում նոր տվյալներ են ստացվում ոչ միայն միջճյուղային կապերի, այլև ժողովրդատնտեսական գլխավոր համամասնությունների, այդ թվում՝ հասարակական արտադրության I և II ստորաբաժանումների վերաբերյալ, որոնք հանգամանորեն շարադրված են աշխատության երրորդ բաժնում։

Մեծ արժեք է ներկայացնում նաև այս բաժնի վերջին՝ «Արտադրանքի արտահանումը և ներմուծումը» գլուխը, որտեղ, առաջին անգամ վերլուծվում են ՀՍՍՀ արտաքին տնտեսական կապերը ինչպես մեր Միության բոլոր հանրապետությունների ու տնտեսական շրջանների, այնպես էլ արտասահմանյան երկրների հետ։

Աշխատությունը դերծ է նաև թերություններից։ Օրինակ, վերջնական արդյունքի կապիտալի ընդհանուր տարիք (էջ 29, 41 և այլն), հեղինակը նրա կազմի մեջ մտցնում է արտահանման և ներմուծման տարբերությունը, մինչդեռ կոնկրետ հաշվարկներ կատարելիս (էջ 250) վերջնական արդյունքի կազմի մեջ մտցնում է արտահանման գումարն ամբողջությամբ։ Համոզեցուցիչ չի 250-րդ էջի աղյուսակի ցուցանիշների հաշվարկման մեթոդը, ըստ որի արտադրության որոշ ճյուղերում արտահանման տեսակարար կշիռը համախառն արտադրանքի մեջ ավելի բարձր է, քան վերջնական արդյունքի մեջ։ Դրանից կարելի է եզրակացնել, որ միջանկյալ արտադրանքը, որը հավասար է համախառն և վերջնական արդյունքի տարբերությանը, չի համապատասխանում իր իրական մեծությանը։

Այդուհանդերձ՝ գրախոսվող աշխատության մեջ ամփոփված ու ընդհանրացված է ՀՍՍՀ 1963 թ. միջճյուղային բալանս կազմելու աշխատանքների դրական փորձը, խորն ու բազմակողմանի վերլուծված են հանրապետության ժողովրդական տնտեսության միջճյուղային կապերը և կատարված են տեսական ու գործնական նշանակություն ունեցող բազմաթիվ հետևություններ։ Դրանք կարևոր նշանակություն ունեն միջճյուղային բալանսի մեթոդի կատարելագործման, այն պլանավորման մեջ օգտագործելու և հանրապետության էկոնոմիկայի հետագա զարգացման համար։

Ռ. Հ. ԿՈՍՏԱՆՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու